

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը հանրապետության խոշոր մշակութային կենտրոններից է։ Ունի երկու մշտական ցուցահանդես՝ հայ նոր գրականության և թատրոնի պատմության, կապակերպում է հորելյանական և շրջիկ ցուցահանդեսներ, որոնք ամեն տարի ցուցադրվում են մայրաքաղաքում, հանրապետության քաղաքներում և շրջանային կենտրոններում, կառույցներում և կոլտնտեսություններում՝ տարեկան ընդգրկելով 140—150 հազար այցելու, սակայն իր առաջ զբաղված խնդիրներով և աշխատանքի բնույթով խիստ տարրերվում է Հայաստանում գործող մյուս թանգարաններից։

Թանգարանի գլխավոր խնդիրն է՝ Հայաստանում, ՍՍՀՄ սահմաններում և արտասահմանյան երկրներում հայտնաբերել և հավաքել XIX—XX դդ. հայ գրականության և արվեստի գործիչների գրավոր ժառանգությունը, այն ենթարկել մշակման և դնել դիտական կազմակերպությունների և կոլեկտիվների տրամադրության տակ։ Իր ավելի քան կեսդարյա գոյության ընթացքում, շրջապատված պետության և դիտական հասարակայնության ջերմ հոգատարությամբ, թանգարանը պատվով է կատարել իր առաջ զբաղված խնդիրները։

Ամեն տարի թանգարան է մտնում 15—20 հազար միավոր նյութ, որի մի մասը ստացվում է արտասահմանից։ Նյութեր հավաքելու աշխատանքում թանգարանին մեծապես օգնում են նրա՝ Սովետական Միությունում և արտասահմանում ապրող հարյուրավոր քարեկամները, գրողներ, արվեստագետներ, մշակութային գործիչներ և բազմաթիվ այլ մարդիկ, որոնց համար թանկ է հայ մշակույթի արժեքների պահպանությունը։ Միայն 1974 թ. թանգարան է բերվել 22 հազար ձեռագիր, այդ թվում բանաստեղծ Ավետիք Իսահակյանի հարուստ գրական արխիվը, որ պարունակում է հեղինակի գրեթե բոլոր արձակ ու չափածո գործերի ինքնագրերը, ժողովրդական բանահյուսության գրառումներն ու մշակումները, թարգմանությունները, հրապարակախոսական աշխատությունները, նամակագրությունը։

Այսպիսով, անցած տասնամյակների ըն-

թացքում թանգարանում կենտրոնացվել է XIX դարի 30-ական թթ. սկսած մինչև մեր օրերի գրողների, գրականագետների, հրապարակախոսների, թատերական և երաժշտական գործիչների, ինչպես և խմբագրությունների՝ «Մշակ», «Մուրճ», «Տարազ», «Անահիտ», «Նորք» և այլ պարբերականների, Կովկասի Հայոց հրատարակչական ընկերության, Թիֆլիսի Հայոց գրամատիկական ընկերության, Հայ գրողների Կովկասյան ընկերության, Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի, Փարիզահայ գրողների ընկերության, Հայաստանի սովետական գրողների միության և այլ ստեղծագործական կազմակերպությունների 702 հավաքածու։

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի պատմության ուսումնասիրության համար անգնահատելի հարստություններ են գրողներ Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Բաքիու, Գաբրիել Սունդուկյանի, Սմբատ Շահազիզի, Պերճ Պողոսյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Հազարոս Աղայանի, Հովհաննես Թումանյանի, Շիրվանզադեի, Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի, Դանիել Դեմիրճյանի, Արշակ Չոպանյանի, Դանիել Վարուժանի, Վահան Մալեզյանի, Զապել Ծսայանի, Նար-Դոսի, Միքայել Կյուրճյանի, հրապարակախոսներ Ստեփանոս Նազարյանի, Գրիգոր Արծրունու Պետրոս Սիմոնյանի, Մկրտիչ Բարխուդարյանի, Համբարձում Առաքելյանի, հայագետներ Գևորգ Ախվերդյանի, Մկրտիչ էմինի, Մանուկ Աբեղյանի, Գրիգոր Խալաթյանի, Կարապետ Կոստանյանի, Գրեգին Սովանձտյանի, Սարգիս Հայկունու, Արսեն Տերտերյանի, Ստեփան Կանայանի, Օրվանդ Շահադիզի, թատերական գործիչներ Գևորգ Չմշկյանի, Պետրոս Աղամյանի, Սիրանույշի Ամիրան Մանգինյանի, Գեղեոն Միրադյանի, Հովհաննես Արելյանի, Գրիգոր Ավետյանի, Արմեն Արմենյանի, Ծկատերինա Դուրյան-Արմենյանի, Իսահակ Ալիխանյանի, Օլգա Մալսուրյանի, Օլգա Գուլազյանի, Վահրամ Փափազյանի, Արուս Ոսկանյանի, Լևոն Քալանթարի, Արտեմ և Մարի Բերդյանների, Արմեն Գուլակյանի, Վաղարշ Վաղարշյանի, Սմբատ Դավթյանի,

Տիգրան Շամիրիականյանի, Ավետ Ավետիսյանի, Հենոն Ալլահվերդյանի, Եկատերինա Իահաթուրի Մամիկոն Գևորգյանի, Հասմիկի, Միրայիլ Մանվելյանի, Վարդան Միրզոյանի, Տրգատ Նշանյանի, Պահարեի, Մկրտիչ Զանանի, Ռուզան Վարդանյանի, Արամ Վրույրի, Գևորգ Փիրումյանի, Կոմպոզիտորներ և երաժշտագետներ Մակար Ալալյանի, Տիգրան Զուխաջյանի, Քրիստափոր Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Նիկողայոս Տիգրանյանի, Վասիլ Ղորղանյանի, Սպիրիդոն Մելիքյանի, Ռոմանոս Մելիքյանի, Վահրամ Սվաճյանի, Օննիկ Պերգեդրյանի, Սաշա Օգանեզաշվիլու, Նիկոլ Գալանտերյանի, Ալան Հովհաննեսի, Արշակ Աղամյանի, Քրիստափոր Քուշնարյանի, Հոստանդին Սարաջյանի, Շարա Տալլանի հավաքածուները, Նշված հավաքածուները պահպանվել են գրեթե ամբողջությամբ և ընդգրկում են հիշյալ հեղինակների համարյա բոլոր երկերի ինքնագրերը, դրած ու ստացած նամակները, որոնք հաճախորդներն արտացոլում են նրանց հեղինակների ստեղծագործական հոգումներն ու ստեղծագործական կապերն իրենց ժամանակակիցների հետ։ Այդ նյութերը, որ օգտագործել էն հայ բանասերների, պատմաբանների ու արվեստագետների մի քանի սերունդներ, մեծապես նպաստել են բազմաթիվ գրական, պատմական և արվեստաբանական հարգերի գիտական մշակմանը։ Թվարկված հեղինակների երկերի ինքնագրերը, տասնյալ հազարավոր նամակները և մյուս նյութերը պատմում են հայ ժողովրդի հոգևոր մշակութային զարգացման անցած 150-ամյա ուղու մասին։ Ձեռագրերը հսկայական նյութ են տալիս նաև սփյուռքահայության մշակութային կյանքի մասին։

Վերևում մենք թվարկեցինք թանգարանի ամենախոշոր հավաքածուները։ Դրանից չպետք է հետևեցնել, թե մնացածներն անարժեք են։ Գևորգ Ասատուրի, Հրաչյա Աճառյանի, Արաղու, Արփիար Արփիարյանի, Գևորգ Դողդիսյանի, Վահան Թոթովենցի, Յուլիա Խանդադյանի, Հարություն Ճուղուրյանի, Միսաք Մեծարենցի, Մուրացանի, Արշակ Շահնազարյանի, Նիկոլ Զարենցի, Հակոբ Պարոնյանի, Վարդգես Սուրենյանի, Արշակ Բուրջալյանի, Հովհաննես Զարիֆյանի, Հովհաննես Սևուդյանի, Լևոն Հարությունի, Սևդակ Սուրաբյանի, Դանիել Ղազարյանի, Անտոն Մայրիլյանի, Աղատ Մանուկյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի հավաքածուները, ընթացած պակասավոր են, սակայն այդ վիճակով անգամ չատրան են տալիս գիտնականներին։ Թանգարանը շարունակում է որոնումները այդ հեղինակների նորանոր նյութեր հայտնաբերելու համար։ Պետք է ասել, որ անցյալ տաս-

նամյակում այս ասպարեզում զգալի հաջողություններ են ձեռք բերվել։ Եղիպտոսում, Լիրանում, Թուրքիայում և այլուր գտնվել և թանգարան են բերվել Պարոնյանի, Արփիարյանի, Զարիֆյանի լուսանկարներն ու ձեռագրերը։ Աշխատանք է կատարվում թանգարանում ռուսագրությունների ֆոնդ ստեղծելու համար, որը կնպաստի անցյալի դործիչների մասին հիշողությունների հավաքմանն ու պահպանմանը։

Թանգարանում կենտրոնացված ձեռագրերը պատմում են ոչ միայն հայ գրականության և արվեստի գործիչների ստեղծագործական աշխատանքի, ներքին փոփոխությունների, ղեկավարական խնդիրների առաջադրման ու լուծման եղանակների մասին, այլև ցուցադրում են նրանց ընդարձակ կապերը աշխարհի ուրիշ ժողովուրդների գործիչների հետ։ Նամակագրության միջոցով հայ և այլազգի գործիչները մտքի են փոխանակել պատմության, գրականության, լեզվի, արվեստների պատմության ու տեսության հարցերի շուրջը, ստեղծել համագործակցության պայմաններ, համատեղ աշխատանքով իրականացրել հայ մշակույթը պրոպագանդող հրատարակություններ։

Հասարակական և գիտական մեծ արժեք ներկայացնող այդ նամակներում օր-օրի արձանագրվել է հայ և այլազգի առաջավոր մտավորականության մշտական կապի ու համագործակցության և մեր ու այլ ժողովուրդների մշակութային փոխադարձ արդասավորման իրական պատկերը։ Այդ մասին են վկայում, օրինակ, Խ. Արուստյանի արխիվում՝ Հ. Արխի, Յր. Պարրոտի, Գ. Սուրբուրդյանի մոտ՝ Կոտե Դիփիանիի, Վասո Արաշիձեի, Ալեքսանդր Դյումալի, Պետրոս Աղամյանի մոտ՝ Մ. Սավինայի, Մ. Իրմոյովայի, Թ. Սավինիի, Շիրվանզադեի մոտ՝ Մ. Գորկու, Իրազիմ Խալիլի, Պերեստիանիի, Հ. Թումանյանի արխիվում՝ Վ. Բրյուսովի, Յու. Վեսելովսկու, Ս. Գորոդեցկու, Տիգրան Տարիձեի, Արշ. Չոպանյանի մոտ՝ Ալֆոնս Դոգեի, Պ. Ժոլիո Կյուրիի, Անտուան Մեյերի, Ռոմեն Ռոլանի, Էմիլ Վերհարնի, Ֆրանց Վերֆելի, Անատոլ Ֆրանսի, Հակոբ Հակոբյանի արխիվում՝ Աղա Նեղրիի, Ա. Լունաչարսկու, Նիկոլայ Տիխոնովի, Միխայիլ Զիսակայայի, Գ. Գեմինյանի մոտ՝ Վ. Սուրկովի, Ս. Բորոգինի, Շավա Դադիանու, Լուի Արադոնի, Վիլյա Լացիսի, Ա. Կոռնեյչուկի, Մ. Ռիսկու, Կ. Սիմոնովի, Ալ. Սպենդիարյանի մոտ՝ Ն. Ռիմսկի-Կորսակովի, Մ. Իպոլիտով-Իվանովի, Կոմիտասի մոտ՝ Մ. Ջալիբերտի, Օ. Ֆլայշերի նամակները։

Թանգարանի հավաքածուներում իրենց պատվավոր տեղն ունեն օտարազգի հայագետներ

նիկողայոս Մառի, Անտուան Մեյերի, Ֆրեդերիկ Ֆրեյդի, այլ լեզուներով ստեղծագործող հայազգի արվեստագետներ Վիլյամ Սարոյանի, Մարիետա Շահինյանի, Ռուբեն Մամուլյանի, Շարլ Ազնավուրի և այլոց գործունեությունը վերաբերող վավերագրերը:

Թանգարանը միջոցներ է ձեռք առնում ստանալու համար այլ գրապահոցներում գտնվող այն ձեռագրերի պատճենները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի գիտական հասարակայնության համար: Գոհունակությամբ պետք է նշել, որ մի շարք գրապահոցներ ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ արտասահմանում սիրահոծաբ թանգարանին են տրամադրել անհրաժեշտ նյութեր: Այսպես օրինակ՝ թանգարանը լենինգրադի Պուշկինյան տնից ստացել է Պետերբուրգի կայսերական համալսարանի 1850 թ. շրջանավարտ, հայ ականավոր դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանի դիսերտացիոն աշխատանքի («Թուրքիկ ակնարկ պարսկական տաղաչափության մասին») պատճենը: Լենինգրադի Արևելագիտական ինստիտուտը թանգարանին է տրամադրել 1850—1860-ական թթ. հայ մշակութային գործիչներ Գևորգ Ախվերդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Ստեփանոս Նազարյանի, Ղևոնդ Ալիշանի, Նորայր Բյուզանզացու և ուրիշների կողմից կարապետ Եզյանին ուղղված մոտ 200 նամակների մանրաժապավենը: Մոսկվայի Լենինի անվան ՍՍՀՄ Պետական գրադարանի ձեռագրական բաժինը թանգարան է ուղարկել Վալերի Բրյուսովի ֆոնդում գտնվող Պ. Մակինցյանի, Ալ. Մատուրյանի և այլոց նամակների լուսանկար-պատճենները: Այդպիսի լուսանկար-պատճեններ և մանրաժապավեններ են ստացվել նաև Թբիլիսիի արխիվներից, Վենետիկի, Վիեննայի, Փարիզի մատենադարաններից: Այս վերջիններում, ինչպես հայտնի է, պահվում են արևմտահայ մամուլի հազվագյուտ հավաքածուներ: Երբ ԳԱ դրականության ինստիտուտը ձեռնամուխ եղավ Հակոբ Պարոնյանի երկերի գիտական հրատարակությանը (տաս հատորով), թանգարանի խնդրանքով Փարիզի նուպարյան մատենադարանն ուղարկեց «Թատրոն» երգիծաթերթի 60 համարների և «Լույս» երգիծաթերթի 1879—1880 թթ. հավաքածուի մանրաժապավենները, իսկ Վիեննայի մատենադարանը՝ «Միրաս» երգիծաթերթի 16 համարների և «Լույս» օրաթերթի 1881—1882 թթ. 40 համարների մանրաժապավենը:

Թանգարանի երաժշտական բաժնում պահվում է ժողովրդական և հոգևոր երգերի ձայնասկավառակների մի մեծ հավաքածու: Այստեղ պահպանված են Կոմիտասի, Արմենակ Շահմուրադյանի, Հայկանուշ Դանիելյանի, Շարա Տալյանի,

Արմենակ Տեր-Արրա՝ամյանի, Գոհար Գասպարյանի, Իլի Չուքասզյանի և ուրիշ նշանավոր երգիչների կատարումները:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում գրական և երաժշտական բաժիններում պահվող դուստնական ստեղծագործությունների ձեռագիր հավաքածուները՝ «Գավթարներ»-ի Դրանց պսակն է կազմում Սայաթ-Նովայի լույսավոր «Դավթարը», որ թանգարան է բերել Հովհ. Թումանյանը: Այգ հավաքածուների մեջ են կովկասում հայերեն, ադրբեջաներեն, վրացերեն լեզուներով ստեղծագործող Ազար Աղամի, Աղա Բալի, Արուսյուն Շնողցու, Դյուրջի Նավեի, Թալիի, Խրիդարի, Հադիբի, Միսկին Բուրջի, Ջամալի, Սազալի և XIX դարի այլ 80 դուստների ամբողջական «գավթարները» կամ առանձին ստեղծագործությունները:

Թատերական բաժնում պահվում են անցյալում տարբեր թատերախմբերի օգտագործած, գերազանցապես ձեռագիր, 3000 ինքնուրույն և թարգմանական պիեսներ, հայ և համաշխարհային հայտնի վիպական դործերի բնագրերով կազմված դրամատիկական երկեր: Դրանց մի մասը անցյալում կենտրոնացված է եղել Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերությունում և հետագայում հանձնվել է թանգարան: Հարյուրավոր դրամաներ, որբերգություններ, կատակերգություններ, ողելիներ տասնամյակներից ստեղծվել են հայկական բեմերում՝ Կոնկասում ու Թուրքիայում, Պարսկաստանում, Եվրոպայում և Ամերիկայում, անուրանալի գերկատարել հայ թատրոնի կյանքում, բայց տպագրության չեն արժանացել: Դրանց մի մասը, չնայած իր պարզունակությանը, կարևոր վավերագրեր են մեր թատերական մշակույթի պատմության համար: Հավաքածուն վկայում է, թե ինչպես հայ բեմի վարպետները անընդհատ ձգտել են բավարարել թատերասեր հասարակության պահանջները, ստեղծել կամ թարգմանել և առօրյա շարիերներ խորագանող երգեր: Գևորգ Չմշկյանը, Գեղեոն Միրազյանը, Մարտիրոս Մնակյանը, Հովհաննես Արելյանը, Գրիգոր Ավետյանը, Պողոս Արաքսյանը, Արմեն Արմենյանը, Իսահակ Ալիխանյանը, Միքայել Մանվելյանը, Հովսեփ Ոսկանյանը, Սաթենիկ Աղամ-

Կ Գուսանական դրականության բաղմաթիվ նյութեր կան նաև հեղինակային սկզբունքով մշակված արխիվներում: Գրող-բանասեր Թորոս Աղատյանը հավաքել է հատկապես Թուրքիայում XVIII—XIX դդ. ապրած և թուրքերեն ստեղծագործող մոտ 150 հայ աշուղների գործերը և նրանց վերաբերյալ կենսագրական տվյալներ:

չանք, Արամ Վրույրը, Ամո Խարազյանը, Մտեփան Քափանակյանը, Լևոն Քալանթարը, Արա Սևկանյանը, լինելով խոշոր արվեստագետներ, միևնույն ժամանակ հանդես են եկել որպես դրամատուրգ կամ թարգմանիչ:

Այս հավաքածուում հատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ նույն դասական պիեսը բեմադրվել է մի քանի թարգմանությամբ: Այսպես, Լեոնտոսովի «Իմական հանգեսը» բեմադրվել է Մ. Զանույանի, Ս. Թառայանի և Տ. Հախումյանի թարգմանությամբ: Զմշկյանը, Արևիկյանը և Փափազյանը առաջնորդվել են իրենց թարգմանած «Օթելլո»-ներով:

Հարուստ է թանգարանի հայագիտական գրադարանը, որն ունի հայոց լեզվի, լեզվաբանության, գրականության, թատրոնի, երաժշտության, հայոց պատմության, կովկասագիտության և գիտության այլ ճյուղերի վերաբերյալ 59 հազար հայերեն, ռուսերեն, վրացերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն և այլ լեզուներով գրքեր: Գրադարանում պահվում են Միքայել Նալբանդյանի, Խափայել Պատկանյանի, Գարրիել Սունդուկյանի, Մանուկ Արևիկյանի, Թորոս Ազատյանի, Արուս Ոսկանյանի անձնական գրադարանները²: Պատկանյանի թիվ են կազմում գրադարանի հնատիպ հայերեն գրքերը: ՀՍՀՄ կենտրոնական գրադարանի 1963 թ. հրատարակած «Հայ հնատիպ գրքերի մատենագիտական ցանկում» ընդգրկված 1512—1800 թթ. տպագրված 1019 հայերեն հնատիպ գրքերից 232-ը գտնվում են թանգարանի գրադարանում:

Հայ գրականությունը թարգմանված է աշխարհի բազմաթիվ լեզուներով: Թանգարանի խնդիրներից մեկն է հավաքել բոլոր այդ թարգմանությունները: Առայժմ միայն մասամբ է կատարված այդ խնդիրը: Ըր բարեկամների միջոցով թանգարանը ձգտում է լրացնել թարգմանությունների հավաքածուն: Ներկայումս ուսերեն, վրացերեն, ադրբեջաներեն, ՍՍՀՄ այլ ժողովուրդների լեզուներով, ինչպես և լեհերեն, շեխերեն, հունգարերեն, ֆրանսերեն, անգլերեն, արաբերեն, պարսկերեն թարգմանությունների թիվը հասնում է 8 հազարի: Կան նաև թուրքերեն, կորեերեն, իսպաներեն թարգմանությունների նմուշներ:

Գրադարանն ունի անցյալում լույս տեսած հայերեն պարբերականների 13473 հավաքածու: Դրանց մեջ բացառիկ արժեք են ներկայացնում Գ. Պատկանյանի «Արարատ» (1850—1851), Ս. Ոսկանի «Արևելքը» (1850), Ս. Նա-

զարյանի «Հյուսիսափայլը» (1858—1864), Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլը» (1871—1901), Բ. Քեչյանի «Բյուզանդիոնը» (1896—1914), Ա. Զոսյանյանի «Անահիտը» (1898—1948), «Կիլիկիա» (1919—1920), «Հայաստանի կոչնակ» (1919—1959) և այլ պարբերականների հավաքածուներ:

Գիտական-պատմական մեծ արժեք ունեն թանգարանի լուսանկարչական վավերագրերի և կերպարվեստի հավաքածուները: Առ այսօր թանգարանի մայր մատյանում գրանցված է 54600 լուսանկար և նեգատիվ: Դրանց մեջ են բոլոր հայ գրողների, թատերական-երաժշտական գործիչների անհատական և խմբական լուսանկարները: Նախահեղափոխական շրջանից պահպանվել են առանձին դերասանների մի քանի դերակատարումների լուսանկարներ: 1930—1940-ական թթ. գործող թատրոնների և արվեստագետների հավաքածուներում այդ կարգի նյութերն ավելի շատ են: 50-ական թթ. սկսած թանգարանը խնամքով հավաքում է Հայաստանի բոլոր թատրոնների և բոլոր առաջատար արվեստագետների կարևոր բեմադրությունների հիմնական տեսարանների և դերերի լուսանկարները: Մամուլը, ուղիղ, հեռուստատեսությունը լայնորեն օգտագործում են այդ նյութերը: Նկարիչներն ու քանդակագործները դրանց հիման վրա են ստեղծում այս կամ այն գործիչին պատկերող իրենց կտավներն ու քանդակները:

Թանգարանում պահվում են հայ կերպարվեստի վարպետների ավելի քան 1200 զեղարվեստական գործերի բնօրինակներ, թատերական ներկայացումների և բեմական ղեկավարների էսքիզների, գրքերի նկարազարդումների մոտ 2000 նմուշ: Քանդակագործական բնօրինակների մեջ են Անդրեաս Տեր-Մարտիրոսյանի՝ Խաչատուր Աբովյանը, Հակոբ Գյուրջյանի՝ Վահան Տերյանը, Արա Սարգսյանի՝ Բաֆֆին, Նրվանդ Քոչարի՝ Հովհաննես Արևիկյանը, Սուրեն Մտեփանյանի՝ Սիրանույշը, Վահրամ Փափազյանը, Նիկ. Նիկողոսյանի՝ Ավետիք Իսահակյանը, Արտաշես Հովսեփյանի՝ Եղիշ Չարենցի, Հրաչյա Ներսիսյանի կիսանդրիները (բրոնզ, մարմար, գրանիտ), Դերենիկ Դանիելյանի՝ Բակունց, Շիրազ, Սիլվա Կապուտիկյան, Ստեփան Զորյան բրոնզե բարձրարանգակները, Հ. Պողոսյանի և Վ. Պողոսյանի՝ Ավետիք Իսահակյանի խճանկարը և այլն: Թանգարանում են գտնվում նաև Գրիգոր Արծրունու, Շիրվանզադեի, Նար-Դոսի, Գաբրիել Սունդուկյանի, Ղազարոս Աղայանի, Կոմիտասի, Վլադիմիր Մայակովսկու, Պելյո Յավրուովի մահվան դիմակները:

Տարբեր եղանակներով պատրաստված գե-

2 Եղիշ Չարենցի՝ մինչև վերջերս այստեղ պահվող անձնական գրադարանը լրիվ հանձնված է պետի տուն-թանգարանին:

ղարվեստական նկարների նավարածուի մեջ քաջատիկ արժեք է ներկայացնում հաշատուր Արուսյանի գունավոր դիմանկարը (գործ՝ էյսդ-վիզ Մայգելի, 1831 թ.): Լյստեղ են Մարտիրոս Սարյանի 45 գործերը (այդ թվում՝ Լևրսանյոր Մատուրյան, Լավտիթ Իսահայան, Եղիշ Չարենց), Եղիշ Թադևոսյանի՝ Հովհաննես Թումանյան, Փանոս Թերլեմեզյանի՝ Կոմիտաս, Եվգենի Լանսերեի՝ Եղիշ Չարենց, Լավտիթ Իսահայան, Նար-Դոս, Եվրեմ Սավոյանի՝ Քլիշան, Հրաչյա Լուսկյանի՝ Սայաթ-Նովա, Ժնչպես նաև Հակոբ Կոչոյանի, Ս. Երկանյանի, Մհեր Լերդյանի, Ս. Լիսիկյանի, Լ. Հարիրյանի, Լեգինե Ղազարյանի, Զարգանդ Հարությունյանի, Շանթ Հերթեցյանի և այլոց գործերը, Վարդգես Սուրենյանի, Միքայել Արուստյանի, Հովհ. Շավարշի, Լեռա Բեքարյանի պրային նկարազարդումները:

Հարուստ է թանգարանի թատերական բաժնի Հայաստանի թատրոնների վերջին հիսնամյակի բեմադրությունների մակետների, էսքիզների, բեմադրեստի էսքիզների հավաքածուն: Լյստեղ խնամքով պահվում են թատերական նկարիչների ավագ սերնդին պատկանող Մարտիրոս Սարյանի, Լեռա Սարգսյանի, Գիգո Շարքարչյանի, Գարեգին Թերցյանի գործերը, Գեորգի Յակովլովի՝ «Վենետիկի վաճառականը», «Մորզանի խնամին», Եվգենի Լանսերեի՝ «Լեոնուշ», Միքայել Արուստյանի՝ «Դիմակահանդես», «Քաջ նազար», Ստեփան Թարյանի՝ «Խաթաբալա», «Պեպո», Կարո Մինասյանի՝ «Խանդուկ», «Դե», հաշատուր Եսայանի՝ «Հիդիպ արքա», «Գևորգ Մարգարետունի», Լեմեն Զիլինդարյանի՝ «Պատվի համար», Մելիքսեմ Սվադչյանի՝ «Լեռա գեղեցիկ», «Երկիր հայրենի», Սիմոն Լիաջաչյանի՝ «Վերաբնիշ», «Եզոր Բուլիշով», Սարգիս Լարուստյանի՝ «Խաշատուր Արուստյան», «Վարդանանք» և այլ բեմադրությունների նկարչական ձևավորումները:

Ստացված արխիվային նյութերը մինչև մայրամասյանի մեջ գրանցվելը ուսումնասիրվում են թանգարանի ֆոնդային հանձնաժողովի կողմից. մայրենի գրականության և արվեստի պատմությանը և տեսությանը շվեդերից նյութերը. որոնք պատահաբար են հայտնվել տվյալ հեղինակի մոտ, առանձնացվում են: Նախորդ պատմաշրջաններին վերաբերող հայերեն, պարսկերեն և այլ լեզուներով մագաղաթյա ձեռագրերը հանձնվում են Մատենադարանին, րադարական, տնտեսական, վիճակագրական բնույթի նյութերը՝ ՀԱՀ Միևիստրների սովետին առընթեր Լարխիվային վարչությանը: Մատենադարանը և Լարխիվային վարչությունն իրենց հերթին թանգարանին են տրամադրում նոր ժամանակների մշակույթին վերաբերող վավերա-

գրերը: Այդպիսի փոխհարաբերություններ են մշակվել նաև Միության այլ թանգարանների հետ: Վերջին տարիներում զգալի թվով ձեռագրեր են ստացվել Պ. Պոռչյանի, Հ. Թումանյանի, Լ. Իսահայանի տուն-թանգարաններից: Վերջերս Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Տ. Շեչենկոյի անվան դրականության ինստիտուտի ձեռագրատունը թանգարանին տրամադրեց Լավտիթ Իսահայանի և Մարտիմ Լիլեկու միջև 1950—1951 թթ. փոխանակված նամակների մանրամասնվածները: Թանգարանը իր հերթին Մոսկվայի Պետական դրական թանգարանի հասցեով ուղարկեց 1920-ական թթ. ուսուցիչ դրականությանը վերաբերող մի հավաքածու, որ ստացվել էր Եգիպտոսից առարված նյութերի հետ:

Հավաքված արխիվային նյութը ենթարկվում է մասնագիտական մշակման: Այդ գործով զբաղվում են 18 պատշաճատողներ: Լեցած տառամայակներում մշակվել է հավաքված արխիվների 65—70 տոկոսը: Տարեկան մշակվում է 15—20 հազար ձեռագիր:

Ձեռագիր նյութերի մշակումը կատարվում է թանգարանի գիտական խորհրդի կողմից հաստատված հրահանգի համաձայն, որը կազմված է Միության առաջավոր հնադարանների՝ Մոսկվայի Վ. Բ. Լենինի անվան Պետական գրադարանի ձեռագրատան, Լենինգրադի Պուշկինյան տան և ՍՍՀՄ Գրականության և արվեստի պետական հնադարանի բազմամյա փորձի հիման վրա և ապահովում է յուրաքանչյուր ձեռագրի գիտական արժեքավորումն ու պահպանությունը: Լարխիվների մշակմամբ զբաղվող գիտաշխատողների առաջ խնդիր է դրվում՝ առանձնացնել պահպանության ենթակա վավերագրերը և նրանցից կազմել պահպանման միավորներ: Գրողի, գրականագետի, հրապարակախոսի վեպը, հետազոտությունը, հոդվածը, երաժշտագետի գրած օպերայի պարտիտուրան, երգը, բեմադրությունների ռեժիսորական մշակումը, դերասանի խաղի գնահատականը, նամակները, ինքնակենսագրականները, հուշերը և այլն կազմում են պահպանման առանձին միավորներ, ամփոփվում են հատուկ թղթապանակների մեջ, համարակալվում, որից հետո յուրաքանչյուրի գիտական նկարագրությունը (վերնագիրը, հեղինակը, ժանրը, գրության թվականը, վայրը, ժամանակը, թերթերի քանակը) արձանագրվում է մատյանի մեջ և քարտի վրա, հանձնվում է ձեռագրատուն և մտցվում գիտական շրջանառության մեջ:

Բացի վերոհիշյալ մատյաններից և բարտարանի թանգարանի ունեցվածքը գիտական հասարակայնությանն է ներկայացվում հատուկ ուղեցույցների միջոցով: Տարբեր ժամանակներ-

րում լույս են տեսել թանգարանի առանձին բաժինների հետևյալ ընդարձակ ուղեցույցները.

1. «Ուղեցույց Գրականության և արվեստի թանգարանի գրական ֆոնդերի» (1962 թ.),
2. «Ուղեցույց Գրականության և արվեստի թանգարանի երաժշտական ֆոնդերի» (1969 թ.),
3. «Ուղեցույց Գրականության և արվեստի թանգարանի թատերական ֆոնդերի» (1971 թ.),
4. «Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» տեղեկատու ուղեցույց (1972): Լույս են տեսել նաև նկարազարդ գունավոր բուկլետներ՝ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով: Նախկինում մշակման ենթարկված թանգարանային ձեռագրերի նկարագրությունը տպվել է 1962 թ. Մոսկվայում ՍՍՀՄ Արխիվային վարչության, Վ. Ի. Լենինի անվան պետական գրադարանի, Գիտությունների ակադեմիայի արխիվի հրատարակությամբ լույս տեսած «Личные архивные фонды в государственных хранилищах СССР» երկ-հատոր ուղեցույցի մեջ:

Այս բոլոր հրատարակությունները հնարավորություն են ընձեռում գիտահետազոտական հիմնարկներին, հրատարակչական կազմակերպություններին, մամուլին, թատրոնի, ռադիոյի, հեռուստատեսության, կինոյի աշխատողներին նախօրոք գիտենալ, թե իրենց ընտրած թեմաների համար ինչ արժեքավոր նյութեր կարող են գտնել թանգարանի գրապահոցներում: Չնայած հայ դասականների ստեղծագործությունը անցած տասնամյակների ընթացքում ենթարկվել է համակողմանի ուսումնասիրության, այնուամենայնիվ թանգարանի հավաքածուներում օրըստօրե ավելացող վավերագրերը միշտ նորանոր տվյալներով հարստացնում են մեր գիտելիքները զրոգի, երաժշտի, թատերական զործի անձի, նրա երկերի ստեղծագործական պատմության, գործունեության շրջանակների, ստեղծագործական միջավայրի մասին: Հեղինակի թղթերի մեջ պահվող նոր հղացումների ծրագրերը, նրանց մասին ստացվող հիշողությունների պատարիկները, մանավանդ նոր հայտնարկվող նամակները լուսարանում են գիտությանը հայտնի երկերում դեռևս չմարմնավորված նոր գեղագիտական հայացքները, գաղափարական ուղղությունները: Հայ գրականությանը և արվեստով զբաղվող գիտնականը միշտ էլ մի նոր բան կգտնի Արքիվային ու Նախնադարյանի, Աղամյանի ու Սիրանուշի, Կոմիտասի ու Սպենդիարյանի արխիվները վերանայելիս:

Եվ գիտնականները անընդհատ խորանում են թանգարանային արժեքների ուսումնասիրության մեջ: Միայն 1974 թ. այցելուների 3564 պահանջագրով գիտական շրջանառության մեջ է

գրվել 34349 պահանջման միավոր: Ամեն տարի հայ գրականության, թատրոնի, երաժշտության զործիքների մասին գիտական և հանրամատչելի հրատարակությունների, ինչպես և մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության հաղորդումների պատկանելի մասի համար հիմք է ծառայում թանգարանը:

Առավել չափով թանգարանի ձեռագրերից օգտվում են ՀՍՀՄ ԳԱ գրականության, արվեստի, պատմության, արևելագիտության ինստիտուտների գիտական աշխատակիցները: Զղալի չափով թանգարանային ֆոնդերի հիման վրա են գրվել Մ. Արևիզյանի անվան գրականության ինստիտուտի հրատարակած «Հայ գրականության պատմություն», արվեստի ինստիտուտի «Հայ սովետական թատրոնի պատմություն» ծավալուն աշխատությունները, Գ. Տիգրանովի «Հայկական երաժշտական թատրոնը», Ք. Քուչնարյանի, Մ. Մուրադյանի, Դ. Գյուղակյանի «Ակնարկ հայ երաժշտության պատմության» գրքերը և բազմաթիվ այլ աշխատություններ:

Ձեռագրերից լայն չափով օգտվում են նաև այլ ժողովուրդների գիտնականներ: Զեխ գրականագետ Լյուդմիլա Մոտալովան, հունգար հայագետ Պալ Սալմաշին հայ դասական և ժամանակակից գրականության մասին իրենց կատարած հետազոտությունների ժամանակ օգտագործել են թանգարանի հայերեն, ռուսերեն, անգլերեն ու ֆրանսերեն նյութերը: Ադրբեջանական բանասերներից ակադեմիկոս Համիդ Արասլին Սայաթ-Նովայի ադրբեջաներեն խաղերը հրատարակելիս, Միրալի Սեյիդովը՝ Սայաթ-Նովայի մասին մենագրություն գրելիս, Քյովսար Թարվերդիևան՝ իր «Ախունզով և Արովյան» մենագրությունը գրելիս, վրաց բանասերներ Արշիլ Շիլակաձեն՝ «Հովհաննես Բումանյան», Բոնդո Արվելաձեն՝ իր «Վահան Տերյանը և վրաց գրականությունը», «Ավետիք Իսահակյան» աշխատությունները գրելիս լայնորեն օգտագործել են թանգարանի նյութերը:

Մշտապես աջակցելով գիտական և հրատարակչական կազմակերպություններին՝ գրականության, պատմության և արվեստի հարցերի գիտական մշակման ասպարեզում, թանգարանի գիտական կոլեկտիվը ևս որոշակի գիտահետազոտական խնդիրներ է լուծում: Թանգարանը պարբերաբար լույս է ընծայում «Գրական ժառանգություն» մատենաշարի հատորները, որոնց մեջ վեր են հանվում և արժեքավորվում թանգարանում պահվող և գիտական աշխարհին դեռևս անծանոթ վավերագրեր: Վերջին տարիներում լույս են տեսել այդ մատենաշարի VI («Արևմտահայ զրոգների նամականի» խորագրով, 1972 թ.) և VII («Դերենիկ Դեմիրճյանի

«Անժանտի Լեքեր», 1974 թ.) հատորները: Մամուլի տակ է VIII հատորը («Ժամանակակիցների հուշերը հայ դասական գրողների մասին»): Այս տարի, Ավետիք Իսահակյանի

ծննդյան 100-ամյակի առթիվ լույս կրնա ծագել նրա «Հիշատակարանը», որը կկազմի այդ մատենաշարի IX հատորը:

Գ. ՄԱԿՈՅԱՆ,

ՊԵՂՈՒՄՆԵՐ ՏԱՆՉԱՎԵՐ ԵՎ ՇԵԿԱԶՈՂ ԳՅՈՒՂՆԵՐՈՒՄ

Ձանգեղուրի բրոնզեդարյան հուշարձանների տառամնասիրությունը մեծ նշանակություն ունի Հայաստանի հարավ-արևելյան մասի նախնա-գարյան ժամանակաշրջանի մշակույթը հետա-գոտելու համար: Հանդիսանալով Հայկական լեռնաշխարհի լուրջ մշակութային օջախներից մեկը, Ձանգեղուրը միաժամանակ սերտ շփման մեջ է եղել Թալիշ-Իրանական աշխարհի հետ: Այս առումով Ձանգեղուրի նորահայտ հուշար-ձանները մի կողմից լրացնում են Հայաստանի մշակույթի շուրջապատման օղակներից մեկը, մյուս կողմից՝ շեշտում նրա արտաքին կապե-րը հարևան երկրների հետ: Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում 1974 թ. Ղափանի շրջանի Տանձավեր և Շի-կահոզ գյուղերում կատարված պեղումները, որոնց արդյունքները ներկայացվում են ստորև:

Ժամանակագրական տեսակետից ամենավաղ հուշարձանը Տանձավեր գյուղի արևմտյան մա-սում գտնվող, մ. թ. ա. III հազարամյակի դամբարան-բարայրն է: Դժբախտաբար այդ յուրօրինակ հուշարձանը ավերված է, նրա պա-րունակած խեցեղենը ջարդոտվել ու դուրս է եկտվել բարայրի հրապարակը: Տեղում հավաք-ված նյութը ներկայացված է սև փայլեցրած կամ արծաթագույն մակերեսով ու կտրմիր ա-տառով քրեզանների ու գավաթների չամբող-ջացող մասերով: Քրեզաններն (աղ. I, նկ. 1, 2, 4) ունեն դուրս ճկված թեք շուրթեր, իրա-նի սահուն անցումներ, որը վաղ բրոնզեդար-յան խեցեղենի էլարյան խմբի բնորոշ գծերից է: Նույն հատկանիշներով են բնորոշվում նաև գավաթները (հայտնաբերված է երկու բեկոր): Դրանք բարձր, կենտրոնական մասում թիթե-վակի ուռուցիկությամբ, ուղիղ վզիկ ու դուրս թեքվող շուրթ ունեցող անոթներ են, որոնց իրանները փոքր-ինչ ձգված են ու բարձրադիր (աղ. I, նկ. 3): Հարթակից հավաքված վերջին նյութը աղեղնաձև կանթի բեկորն է (աղ. I, նկ. 5):

Խոսելով էլարյան տիպի խեցեղենի մասին, հարկ է նկատել, որ այն հսկայական տարածք է ընդգրկում, հասնելով հարավում մինչև իրա-նական Ադրբեջան: Համեմատական նյութի այս-պիսի առատությունը և նմանությունը ցույց է

տալիս, որ Ձանգեղուրի այս հատվածը նույն-պես հանդիսացել է Հայկական լեռնաշխարհի մշակույթի միասնական շրջաններից մեկը: Այդ է վկայում և Գորիսի շրջանի Խոզնավար գյու-ղից հայտնաբերված ամբողջական գավաթը, որը ոչնչով չի տարբերվում տանձավերյան բե-կորներից և նույնությամբ կրկնում է կամոյից, էլարից և Հայաստանի այլ վայրերից հայտնա-բերվածներին¹: Հարկ է նկատել սակայն, որ այդ մշակույթը վաղ բրոնզեդարյան հուշար-ձանների տարբեր շերտերում է հանդիպում և հետևաբար տարբեր ժամանակներով է թվա-դրվում (մ. թ. ա. IV հազ. վերջ և III հազ.)², որը և թույլ չի տալիս Տանձավերից պատահա-կանորեն հայտնաբերված նյութերը ստույգ կերպով թվագրել: Այս հանգամանքը ստիպում է մեզ այդ նյութերը ընդհանուր կերպով թվա-գրել մ. թ. ա. III հազարամյակով:

Ավելի ուշ ժամանակաշրջանի են պատկանում Տանձավեր գյուղից 2,5 կմ հյուսիս-արևելք գտնվող «Միշակ արտ» կոչվող վայրի դամբա-րանադաշտի մի դամբարանաթմբից (տրամա-գիծը՝ 7,80 մ, բարձր.՝ 1,90 մ) հայտնաբեր-ված նյութերը: Դամբարանաթմբը ծածկում էր վերերկրային տիպի քարարկղային դամբա-րանը (աղ. I, նկ. 6 ա), որն ուղղված էր արե-վելից-արևմուտք (երկար.՝ 4,10 մ, բարձր.՝ 1,80 մ, լայն.՝ 1,60 մ): Կմախքը, որ պատկա-նում էր երկարազանգ, մոտ 45 տարեկան տղա-մարդու, գտնվում էր դամբարանի արևմտյան մասում, զբաղեցնելով մեծ տեղը, ծալած վերջավորություններով: Նրա ստորին ծնոտը գտնվեց ոտքերի մոտ: Դամբարանում հայտնա-բերված նյութերը հիմնականում ներկայաց-նում են խեցեղեն առարկաներ, որոնք տեղա-դրված էին քարարկղի արևելյան և արևմտյան

¹ Է. Վ. Խանգադյան, Հայկական լեռ-նաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամ-յակում, Երևան, 1967, էջ 76—77, նկ. 14, աղ. X, նկ. 3—4, աղ. XIV, նկ. 2, աղ. XXIV:

² Մանրամասնություններ տե՛ս К. Х. Куш-нярева, Т. Н. Чубиннишвили, Древ-ние культуры южного Кавказа, Л., 1970, էջ 178—184: